ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 1-ին և 2-րդ հարցերին:

«Հայրենիքն ամուր կապանքների մեջ է առնված, նրա վրա են դրված անօրինական ծանր հարկեր, երբ իր հայրը սպանվել է՝ հակառակ նրան տրված երաշխիքների, երբ ամբողջ իր հարազատ ժողովուրդը ստրկացված և ցրված է…»:

1 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Արշակ Արշակունի
2) Մուշեղ Մամիկոնյան
3) Արտավան Արշակունի
4) Սմբատ Բագրատունի

2 **Ո՞ւմ աշխատությունից է վերցված մեջբերումը:**

1) Ղևոնդ
2) Պրոկոպիոս Կեսարացի
3) Ագաթիոս Միրինեյացի
4) Սեբեոս

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 3-րդ և 4-րդ հարցերին:

«…Հեք ու ստրուկ ժողովրդեան մը առաջին ու միակ ազատարարն ինքն է, իր աշխատութիւնն է, իր ներքին ուժն է, իր լոյսն է, միութիւնն ու հաստատ կամքն է»:

3 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը:**

1) Մատթեոս Մամուրյան
2) Հարություն Սվաճյան
3) Նահապետ Ռուսինյան
4) Գրիգոր Արծրունի

4 **Ո՞ր ապստամբության համար է հանգանակություն կազմակերպել վերը նշված խոսքերի հեղինակը:**

1) Սասունի 1894 թ. հերոսամարտ
2) Սասունի 1904 թ. ապստամբություն
3) Զեյթունի 1862 թ. ապստամբություն
4) Զեյթունի 1895 թ. ապստամբություն

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 5-րդ և 8-րդ հարցերին:

« Վա՛յ հայերին, որ երբևէ ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Ավելի լավ կլիներ, եթե Հայաստան անունը երբեք արտասանված չլիներ եվրոպական որևէ դիվանագետի կողմից»:

5 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Վուդրո Վիլսոն
2) Ֆրիտյոֆ Նանսեն
3) Հովհաննես Քաջազնունի
4) Լլոյդ Ջորջ

6 **Ի՞նչ հարցի հետ կապված է նա ասել այդ խոսքերը:**

1) «Արևելյան հարց»
2) «Հայ դատ»
3) «Ազգային օջախ»
4) «Մանդատի հարց»

7 **Ո՞ր կոնֆերանսում է տապալվել այդ հարցը:**

1) Լոզանի
2) Մոսկվայի
3) Փարիզի
4) Լոնդոնի

8 **Ե՞րբ է այդ հարցը հանվել Ազգերի լիգայի օրակարգից:**

1) 1927 թ. հունվարի 1
2) 1925 թ. սեպտեմբերի 22
3) 1929 թ. հունվարի 22
4) 1929 թ. սեպտեմբերի 1

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 9-րդ և 10-րդ հարցերին:

«Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա գրված էր հայերեն տառերով հետևյալը. «Արշակ թագավոր Նյուսիա աստծուն», այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր Արշակ թագավորից: Այդ Արշակն այն ժամանակ Հայոց թագավորն էր…»:

9 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Պլուտարքոս
2) Հիպպոլիտիոս
3) Փիլոստրատոս
4) Բարդածան

10 **Ո՞ր դարում է գահակալել մեջբերման մեջ հիշատակվող թագավորը:**

1) Ք.ա. II դար
2) II դար
3) I դար
4) Ք.ա. I դար

11 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը:**

«…Անհրաժեշտ է գործել արագ: Եթե բավարարվենք մասնակի կոտորածով, ինչպես եղավ 1909 թ. Ադանայում և այլ շրջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ վտանգ կստեղծենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք վերացնել ճանապարհից՝ արաբներին ու քրդերին»:

1) Նազըմ
2) Ջեմալ
3) Էնվեր
4) Թալեաթ

12 **Ո՞ր տերություններն են հանդես եկել համատեղ հայտարարությամբ հայերի կոտորածների կապակցությամբ 1915 թ. մայիսի 11-ին:**

1) Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ֆրանսիա
2) Իտալիա, Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա
3) Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա
4) Ֆրանսիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 13-րդ և 14-րդ հարցերին:

«Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմի պատմության մեջ… Հայերը Ղարաքիլիսայի մարտով ցույց տվեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:

13 **Ո՞վ է խոսքերի հեղինակը:**

1) Կարաբեքիր փաշա
2) Յակով Գանեցկի
3) Գեորգի Չիչերին
4) Վեհիբ փաշա

14 **Որտե՞ղ են ասվել խոսքերը:**

1) Բաթում
2) Մոսկվա
3) Թիֆլիս
4) Բաքու

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 15-րդ և 16-րդ հարցերին:

«Նա, ով կառուցում է գործարան, տաճար է կառուցում»:

15 **Ո՞վ է խոսքերի հեղինակը:**

1) Ռամսեյ Մակդոնալդ
2) Ալբեր Լեբրեն
3) Ջովաննի Ջոլիտտի
4) Քալվին Քուլիջ

16 **Ո՞ր երկրի առաջնորդն է եղել խոսքերի հեղինակը:**

1) Մեծ Բրիտանիա
2) Ֆրանսիա
3) ԱՄՆ
4) Իտալիա

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 17-րդ և 18-րդ հարցերին:

«…Կոմունիստները կամ հինգերորդ շարասյուները գնալով մեծացող սպառնալիք և վտանգ են ներկայացնում քրիստոնեական քաղաքակրթության համար…»:

17 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Իոսիֆ Ստալին
2) Վուդրո Վիլսոն
3) Ֆրանկլին Ռուզվելտ
4) Ուինսթոն Չերչիլ

18 **Որտե՞ղ են հնչել վերը բերված խոսքերը:**

1) Լոնդոն
2) Յալթա
3) ֆուլտոն
4) Պոտսդամ

Կարդացե՛ք մեջբերումը և պատասխանե՛ք 19-րդ և 20-րդ հարցերին:

«Եթե ձեր հարևանն իր տանը փոխում է պաստառները, ապա չի նշանակում, որ դուք էլ ձեր տանը պարտադիր պետք է վերանորոգում սկսեք»:

19 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:**

1) Նիկոլաե Չաուշեսկու
2) Էրիխ Հոնեկեր
3) Էդվարդ Բենեշ
4) Միխայիլ Գորբաչով

20 **Ո՞ր պետության ղեկավարն էր խոսքերի հեղինակը:**

1) Չեխոսլովակիա
2) Ռումինիա
3) ԳԺՀ
4) ԽՍՀՄ

21 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

ա. Նոր քարի դարում արձանագրված նշանակալից առաջընթացը՝ փոփոխությունների ամբողջությունը, մարդկության պատմության մեջ անգլիացի գիտնական Գորդոն Չայլդի կողմից բնորոշվել է որպես «նորքարիդարյան հեղափոխություն»:

բ. Թեոկրատական կարգը պետական կառավարման մի ձև է, որում աշխարհիկ և հոգևոր ամբողջ իշխանությունը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում:

գ. Հայասայի արքաները կրում էին «Մեծ թագավոր տիտղոսը»:

դ. Նաիրի թագավորության հիմքի վրա բարձրացած պետությունը հայտնի է Վանի համահայկական թագավորություն անունով:

ե. Մարաստանը Հայաստանին միացնելուց հետո հայոց արքան կրում էր «արքայից արքա» տիտղոսը:

զ. Հայաստանի առաջին բաժանումից հետո նրա արևմտյան մասում պետական գործավարությունը տարվում էր պահլավերենով:

է. Մարդկության պատմության քաղաքակրթական շրջանը սկիզբ է առնում երկաթի դարից:

1) ա, ե, է
2) բ, գ, դ
3) ա, բ, դ
4) բ, գ, զ

22 **Հայդուկի մականունը համապատասխանեցրե՛ք նրա անուն ազգանվանը:**

1) Պանդուխտ	ա. Առաքել Մխիթարյան
2) Արաբո	բ. Համբարձում Բոյաջյան
3) Մեծն Մուրադ	գ. Միքայել Սեֆերյան
4) Իշխան	դ. Սարգիս Մեհրաբյան
5) Նիկոլ Դուման	ե. Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան
6) Վարդան	զ. Հովսեփ Արղության
7) Հրայր Դժոխք	է. Թորոս Ծառուկյան
	ը. Արմենակ Ղազարյան

1) 1-է, 2-բ, 3-զ, 4-ը, 5-ե, 6-ա, 7-գ
2) 1-ե, 2-ը, 3-ա, 4-զ, 5-բ, 6-դ, 7-գ
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-զ, 5-ե, 6-դ, 7-ը
4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-զ, 5-ե, 6-դ, 7-ը

23 **Ո՞ր շարքի բոլոր տերմիններն են գործածական եղել Հունաստանում:**

1) Օստրակիզմ, կոնսուլ, ապելլա, լիթուրքիա, բուլե, տիրանիա, հելոտ
2) Օստրակիզմ, տրիտիա, տիրանիա, բուլե, ապելլա, հելոտ, լիթուրգիա
3) Կոմիցիա, բուլե, ապելլա, պլեբեյ, կոնսուլ, ցենզոր, օպտիմատ
4) Կրատոս, նոմարքոս, արիստոս, օստրակիզմ, հելոտ, տրիտիա, բուլե

24 **Թվարկվածներից որո՞նք են Փետրվարյան ապստամբության պատճառներ:**

ա. Նոր իշխանությունների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը:
բ. Վրաստանին պատերազմ հայտարարելու պատճառով շտապ իրականացված զորահավաքը:
գ. Նոր իշխանությունների այն հայտարարությունը, որ Խորհրդային Ադրբեջանի հետ տարածքային վեճերը լուծվելու են հօգուտ ադրբեջանցիների:
դ. Բնակչության ունեցվածքի կամայական բռնագրավումները, որոնք ուղեկցվում էին անհնազանդների ձերբակալություններով:
ե. Նէպի քաղաքականության գործադրումը, որի հետևանքով կտրուկ վատթարացավ գյուղացիության դրությունը:
զ. ՀՍԽՀ իշխանությունների բացահայտ թուրքամետ քաղաքականությունը և Թուրքիային տարածքային պահանջներ առաջադրելուց հրաժարվելու հայտարարությունները:
է. Խորհրդային իշխանության գործադրած քաղաքական բնույթի հետապնդումները և բռնությունները:

1) ա, դ, է
2) գ, դ, զ
3) գ, ե, զ
4) ա, գ, է

25 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Գեղարվեստական խեցեղենն ու ապակեղենը Հայաստանում զարգացած միջնադարում ստացան լայն կիրառություն:
բ. Աշոտ III-ի թագադրությանը ներկա էին Հայոց աշխարհի բոլոր իշխանները, բարձրաստիճան հոգևորականները և Վիրքի թագավորը:
գ. Միջնադարում եկեղեցին ապահովում էր Հայաստանի միասնականությունը:
դ. «Գիրք թղթոց» դավանաբանական թղթակցությունների ժողովածուն կազմվել է V դարում:
ե. Զարգացած միջնադարում Հայաստանում ընդարձակվում է ոռոգման ցանցը:
զ. Ուշ միջնադարում Հայաստանում ընդարձակվում է տեխնիկական բույսերի՝ բամբակի, կտավատի, քունջութի, կանեփի մշակումը:
է. Խաչքարային արվեստը քանդակագործության ինքնուրույն ճյուղ դարձավ XI դարում:

1) ա, գ, դ
2) բ, գ, զ
3) ա, գ, ե
4) ա, բ, ե

26 **Հետևյալ փաստարկներից որո՞նք են ճիշտ:**

ա. 1992 թ. դեկտեմբերին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:
բ. 1993 թ. մայիսի 18–ին հայ ազատամարտիկները մտան Լաչին:
գ. 2007 թ. հունվարի 19–ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը:
դ. 2009 թ. հոկտեմբերի 10–ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները:
ե. 1992 թ. հունվարի 8–ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33–ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը:
զ. 1920–ական թվականների սկզբին ամենամարդաշատ հայկական գաղթօջախը Շվեդիայում էր:
է. 1949 թ. օգոստոսին ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը:
ը. 2015 թ. հունվարից ՀՀ–ն Եվրոպայի խորհրդի (ԵԽ) լիիրավ անդամ է:

1) գ, դ, ե, է
2) բ, դ, ե, ը
3) ա, բ, զ, ը
4) բ, գ, զ, է

27 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Թովմա Աքվինացին գտնում էր, որ ճշմարտությունը կարելի է գտնել միայն հավատի միջոցով:
բ. Մասնավոր, գիլդիական և համքարային դպրոցները գտնվում էին եկեղեցու իրավասությունից դուրս:
գ. XIV դարի երկրորդ կեսից սկիզբ է առնում պատմական հուշագրության ժանրը:
դ. Միջնադարյան Հնդկաստանի մշակույթի առանձնահատկություններից մեկն այն է, որ չստեղծվեց միասնական մշակույթ:
ե. Դեռևս VIII դարում Չինաստանում հրատարակել են թերթ, որտեղ տպագրում էին կայսերական հրամանները:
զ. VIII դարում չին տպագրիչները փորագրում էին կավե սալիկների վրա, ապա թանաք էին քսում և մի թերթ թուղթ դնում տպագրելու համար:
է. Միջնադարյան իսլամական մշակույթը բաժանվում է չորս փուլերի:

1) ա, բ, է
2) դ, ե, զ
3) գ, զ, ե
4) բ, դ, ե

28 **Բերված փաստարկներից որո՞նք տեղ չեն գտել ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենի 1947 թ. Կոնգրեսին հղված ուղերձում:**

ա. Մեծածավալ տնտեսական օգնություն տրամադրել եվրոպական երկրներին:
բ. Ստեղծել արևմտյան երկրների ռազմաքաղաքական խմբավորում՝ ԱՄՆ-ի հովանու ներքո:
գ. ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև Եվրոպան բաժանել ազդեցության գոտիների:
դ. ԽՍՀՄ-ի սահմանագծի երկայնքով տեղակայել ամերիկյան ռազմակայաններ:
ե. Միավորել ամբողջ անգլոսաքսոնական աշխարհի ուժերը:
զ. Անհրաժեշտության դեպքում ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների դեմ կիրառել զինված ուժեր:

1) բ, դ
2) դ, զ
3) գ, ե
4) ա, գ

29 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Մեխիկոյի հովտում ինկերը հիմնեցին Տենոչտիտլան մայրաքաղաքը:
բ. Մայաները որսորդությամբ չէին զբաղվում և ընտանի կենդանիներ չէին պահում:
գ. Ացտեկների թշնամի մի քանի ցեղերի օգնությամբ պորտուգալացիները կործանեցին նրանց պետությունը:
դ. Իսպանացի կոնկիստադոր Պիսարոն ձերբակալեց ինկերի կայսրին, ստացավ նրա փրկության համար պահանջած փրկագինը, սակայն սպանեց կայսրին:
ե. Ացտեկների մոտ ամենահարգի զբաղմունքը ռազմական ծառայությունն էր:
զ. XVI-XVII դարերում Ամերիկայից Անգլիա տեղափոխվեց 200 տոննա ոսկի և 18 հազար տոննա արծաթ:
է. Մարդկանց զոհաբերությունը ինկերի կրոնական արարողությունների անբաժան մասն էր:

1) բ, զ, է
2) դ, գ, է
3) բ, դ, ե
4) ա, դ, ե

30 **Թվարկվածներից որո՞նք են 1921 թ. հոկտեմբերի 20–ին Անկարայում կնքված ֆրանս–թուրքական պայմանագրի արդյունքներից:**

ա. Հայաթափված Կիլիկիան հանձնվեց Թուրքիային:
բ. Կիլիկիահայ բեկորներից Կիլիկիայում ձևավորվեց «հայկական օջախ»:
գ. Ֆրանսիական զորամասերը լքեցին Կիլիկիան:
դ. Կիլիկիան հռչակվեց ինքնավար՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո:
ե. Ինքնավար Կիլիկիան ստեղծեց 50–հազարանոց բանակ:
զ. Կիլիկիահայության վերջին բեկորներն արտագաղթեցին հարևան արաբական երկրներ և Եվրոպա:
է. Մինչև 1923 թ. սկիզբը Կիլիկիայից հեռացան նաև շուրջ 6000 ուրֆայահայեր, որով ավարտվեց երկրամասի հայաթափումը:
ը. Թուրքական կողմը պարտավորվում էր իրավարար վճռի հրապարակման օրից հրաժարվել Ֆրանսիային հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից:

1) բ, դ, ե, է
2) ա, գ, զ, է
3) բ, գ, դ, զ
4) ա, գ, դ, ը

31 **Հետևյալ պնդումներից որո՞նք են հանդիսանում Եկատերինա II կայսրուհու գործունեության հետևանք:**

ա. Գիտությունների ակադեմիայի հիմնումը:
բ. Դասային ներկայացուցչական առաջին ժողովի հրավիրումը:
գ. Նահանգներում գործադիր, դատական և ֆինանսական իշխանությունների տարանջատումը:
դ. Կառավարման համապետական մարմինների՝ պրիկազների հիմնումը:
ե. Զինվորական ծառայության նոր կարգի հաստատումը:
զ. Օրենսդրության մեջ «հպատակների իրավունք» հասկացության ամրապնդումը:
է. «Ազատ ձեռներեցության մասին» օրենքի ընդունումը:

1) ա, բ, զ
2) գ, զ, է
3) դ, ե, է
4) բ, ե, դ

32 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

ա. Գարեգին Նժդեհի զորքերը 1920 թ. ապրիլին Որոտանի կիրճում պարտության մատնեցին Կապանը գրավել ձգտող թուրքական զորքերին:
բ. 1918 թ. հուլիսի վերջին Զանգեզուրից Նախիջևան անցած զորավար Անդրանիկը ձեռնամուխ եղավ երկրամասի պաշտպանության կազմակերպմանը թուրք-ադրբեջանական ոտնձգություններից:
գ. Բոլշևիկյան Ադրբեջանը, համագործակցելով երիտթուրքերի հետ, Խորհրդային Ռուսաստանից պահանջում էր Ղարաբաղը հանձնել իրեն:
դ. 1918 թ. վերջին Գողթան գավառի Վերին և Ներքին Ագուլիս գյուղերի հայ բնակչությունը ենթարկվեց կոտորածի:
ե. Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդած Անգլիան Ղարաբաղի հարցում որդեգրեց ադրբեջանամետ, իսկ Զանգեզուրի հարցում՝ հայամետ կեցվածք:
զ. Գարեգին Նժդեհը 1920 թ. հուլիսի սկզբին բոլշևիկների Գորիս ներխուժելուց հետո փոքրաթիվ ուժերով քաշվեց Խուստուփ լեռը:
է. Ադրբեջանը, իր ստեղծման ժամանակներից, զավթողական նկրտումներ դրսևորեց Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի և հայկական մի շարք այլ տարածքների նկատմամբ:

1) ա, զ, է
2) գ, դ, է
3) գ, ե, զ
4) ա, բ, գ

33 **1720-ական թթ. Սյունիքում և Արցախում ծավալված ազատագրական պայքարի իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Թուրքական 6000-ոց զորախմբի ջախջախումը Վարանդայում
բ. Հալիձորի բերդի անկումը
գ. Ռազմական խորհրդի ստեղծումը Շինուհայրում
դ. Մեղրիի հաղթական ճակատամարտը
ե. Շուշին գրավելու թուրքական զորքի անհաջող փորձը
զ. Հայկական իշխանության ստեղծումը Կապանում
է. Կապանի զինվորական հրամանատարության անցումը Մխիթար սպարապետին
ը. Դավիթ բեկի կողմից պատվիրակության ուղարկումը Թահմասպ II-ի մոտ

1) գ, ա, ե, զ, դ, ը, է, բ
2) ա, ե, գ, ը, բ, է, դ, զ
3) ա, գ, է, ը, զ, բ, դ, ե
4) գ, զ, ը, ա, ե, դ, է, բ

34 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Ուսամա բեն Լադենի կողմից կազմակերպված ահաբեկչությունը Նյու Յորքում
բ. ԽՍՀՄ-ի փլուզումը
գ. Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումը
դ. Սոցիալիստական վարչակարգի փլուզումը Արևելյան Գերմանիայում
ե. Ռուս-վրացական պատերազմը Հարավային Օսիայի համար
զ. ԱՊՀ կանոնադրության ընդունումը

1) գ, դ, բ, զ, ա, ե
2) դ, գ, բ, ա, զ, ե
3) դ, բ, գ, ե, զ, ա
4) գ, բ, դ, զ, ե, ա

35 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Պարսից արքայի և բյուզանդական կայսեր միջև 532 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
2) Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումից հետո նախարարական տան գլխավորի («տանուտեր») ժառանգորդը՝ ավագ եղբայրն անվանվում էր ավագ սեպուհ:
3) Իշխանաց իշխանը Բագրատունյաց Հայաստանում փոխարինում էր Ռուբինյանների շրջանի մարաջախտին:
4) Հայկական աղբյուրներում Կիլիկյան Հայաստանը կոչվում է «Ծովային կղզի»:
5) Պարսկա–բյուզանդական բաժանումից հետո Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգը կրում էր «Մեծ Մասն Մեծ Հայոց» անունը:
6) Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության անկումից հետո նախարարական տան գլխավորը հայտնի էր «տեր» կամ «տանուտեր» անունով:
7) Արքայական տոհմի շառավիղներից ձևավորված խավին վաղ միջնադարում անվանում էին ոստանիկներ:

36 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) 1869 թ. Արսեն Կրիտյանի և Պետրոս Հայկազունու գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստեղծված ազատագրական խմբակը կոչվում էր Հայրենասերների միություն:
2) 1849 թ. Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Օրդուբադի գավառներից կազմված վարչական միավորը կոչվել է Երևանի նահանգ:
3) 1917 թ. մարտի 9-ին ձևավորվեց կովկասյան 5 պատգամավորներից կազմված գործադիր մարմին, որը կոչվեց Անդրկովկասյան կոմիսարիատ:
4) «Որոգայթ փառաց» գրքի համաձայն հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը կոչվելու էր «Հայոց տուն»:
5) XIX դ. սկզբին Արևելյան Հայաստանի մեծագույն մասն ընդգրկված էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գանձակի և Մակուի խանությունների տարածքում:
6) Պանթյուրքիզմը ենթադրում էր իսլամադավան բոլոր ազգերի միավորում օսմանյան Թուրքիայի դրոշի ներքո և սրբազան պատերազմ (ջիհադ) բոլոր անհավատների՝ գյավուրների դեմ:
7) 1828 թ. մարտի 21-ի Նիկոլայ I-ի հրամանագրով Երևանի և Ղարաբաղի նախկին խանությունների տարածքի վրա կազմված վարչական նոր միավորը կոչվեց Հայկական մարզ:

37 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Երևանում 1923 թ. նոյեմբերին կայացած ՀՅԴ համագումարը հայտնի է «Ինքնավերացման համագումար» անունով:
2) Թուրք–հայկական պատերազմի ժամանակ Լոռու չեզոք գոտում անգլիացի գեներալ–նահանգապետին հեռացնելուց հետո այդ երկրամասում հաստատված իշխանության մարմինը կոչվել է հայկական գեներալ–նահանգապետություն:
3) Բաքվում գտնվող հայկական զորամասերը լուծարելու մասին Բաթումի պայմանագրի կետերը չճանաչած և Ստեփան Շահումյանի գլխավորած ժողովրդական կոմիսարների իշխանության հետ ինքնապաշտպանություն կազմակերպած մարմինը Բաքվի Հայոց ազգային խորհուրդն էր:
4) Մայիսյան ապստամբության ժամանակ բոլշևիկների ազդեցության տակ անցած զրահագնացքը կոչվում էր «Վարդան Մամիկոնյան»:
5) Ալեքսանդրապոլում բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ):
6) Համո Օհանջանյանի կառավարությանը փոխարինած Սիմոն Վրացյանի կառավարությունը հայտնի է «բյուրո–կառավարություն» անունով:
7) Վրաց–հայկական կարճատև պատերազմից հետո Լոռին և Ջավախքի հարավային մասը հայտարարվեցին «չեզոք գոտի»:

38 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Խոսրով IV-ի՝ Հայաստան գալուց հետո Արշակ III-ը հեռացավ Հայաստանի արևմտյան մաս:
2) 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը Համազասպ Մամիկոնյանին անվանել է առաքինի և ուսումնասեր գործիչ:
3) Արտավազդ V-ին հայոց գահին նախորդել է Խոսրով II-ը:
4) Հռոմեական զորքերի՝ Հայաստան ներխուժման պահին արքայից արքա Տիգրան Մեծն իր բանակի գլխավոր ուժերի հետ գտնվում էր Պաղեստինում:
5) Տրդատ III-ը Փայտակարանի եպիսկոպոս է հաստատել Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ Գրիգորիսին:
6) 363թ. կնքված պայմանագրով Հովիանոսը Շապուհին պարտավորեցնում էր չօգնել հայերին:
7) Պապի վարած անկախ քաղաքականության արդյունքում Հայաստանից վտարվել էին պարսից զորքերը:

39 **1894-1896 թթ. ազատագրական պայքարի վերաբերյալ հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) 1896 թ. Մեծ տերությունների միջնորդությամբ Հալեպում կնքված հաշտության համաձայն Զեյթունում տեղակայվելու էր թուրքական զորք:
2) 1895 թ. աշնանը Մալաթիայի հայերը Եղիշե քահանա Խաչատրյանի գլխավորությամբ ջարդեցին թուրք ոստիկաններին ու թուրքական խուժանին և վտարեցին քաղաքից:
3) 1896 թ. հունիսի 8-ին Պարսկաստանի սահմանագլխին՝ Ս. Թադեի վանքից ոչ հեռու, 1500 վանեցիների վրա հարձակվեցին կանոնավոր զորքն ու քրդական մազրիկ ցեղի հրոսակները:
4) 1894 թ. ավելի քան 40 000-անոց թուրքական բանակի դեմ սասունցիները կռվել են 2 հազար քաջերով՝ զինված կայծքարե հրացաններով, դաշույններով ու կացիններով:
5) Հայ ազգային ուժերը՝ մասնավորապես դաշնակցականները, 1895 թ. հոկտեմբերի 12-ին Արեգին գյուղում հրավիրած ժողովում որոշել են Զեյթունը թշնամուց պաշտպանելու համար զենքի դիմել:
6) 1894 թ. օգոստոսի սկզբի արյունալի մարտերից հետո սասունցիները ստիպված թողել են Տալվորիկը և քաշվել Անդոկի լանջերը:
7) 1896 թ. զինվորական մարմնի որոշմամբ՝ 500 երիտասարդներ մոտ 30 դիրքեր կազմեցին Այգեստանին հարակից մահմեդական թաղամասերի դիմաց:

40 **Խորհրդային Հայաստանի արդյունաբերացմանը վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Աճեց բանվոր դասակարգի և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի թվաքանակը:
2) Երևանում կառուցվեց արհեստական կաուչուկի գործարան, որը բավարարում էր ԽՍՀՄ-ի կաուչուկի պահանջարկի մեծ մասը:
3) Ավելացավ ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնությունը:
4) Առաջին երկու հնգամյակների ընթացքում շահագործման հանձնվեց 44 արդյունաբերական ձեռնարկություն:
5) Սևանում հայտնաբերեցին մոլիբդենի հանքավայրեր:
6) Ալավերդին դարձավ տեքստիլ արդյունաբերության կենտրոն:
7) Արարատը դարձավ տուֆի արդյունահանման կենտրոն:

41 **Հետևյալ ձեռնարկումներից որո՞նք է իրականացրել Նադիրը՝ հայերի համակրանքն ու օժանդակությունը ստանալու համար:**

1) Ճանաչել է Սևանի հարավարևելյան մասում իշխող մելիք-Հակոբջանյան տոհմի ներկայացուցիչների իրավունքները:
2) Արշավել է Արևմտյան Հայաստան և օգնել Մուշի և Սասունի ապստամբ հայերին:
3) Արցախը անկախ է հայտարարել Գանձակի խանությունից՝ այն դարձնելով առանձին վարչական միավոր:
4) Հայ ժողովրդի նկատմամբ իր բարյացկամությունն ընդգծելու համար այցելել է Էջմիածին ու ներկա եղել պատարագին:
5) Երևանի քալանթար է նշանակել Մելիքջան Մելիք-Շահնազարյանցին:
6) Արցախի հարթավայրից տեղահանել և Խորասան է աքսորել այնտեղ բնավորված աֆշարներ ցեղին:
7) Վերահաստատել է կաթողիկոսի և հայ հոգևորականության հնուց սահմանված իրավունքները:

42 **Հետևյալ պատճառահետևանքային կապերից որո՞նք են ճիշտ:**

1) Ավարայրի ճակատամարտից որոշ ժամանակ անց պարսից տերությունը հարկադրված էր Հայաստանից հանել իր զորքերը, հոգևորականներին թույլատրել անցնել իրենց ծառայությանը, շինականներին՝ տեր կանգնել իրենց ունեցվածքին:
2) Գյուտի կաթողիկոսական աթոռին բարձրանալը պայմանավորված էր Հովսեփ Ա-ի ձերբակալությամբ:
3) Տիզբոնից հայրենիք վերադառնալուց կարճ ժամանակ անց՝ 450 թ. ապրիլին Վարդան Մամիկոնյանը հայտնեց ապստամբության մասին:
4) Պարսից արքայի պահանջով Տիզբոն ժամանած հայ նախարարները հայրենիք վերադառնալու և ապստամբություն կազմակերպելու համար առերես ընդունեցին զրադաշտականությունը:
5) Վարդանանց պատերազմի ավարտին գերված հայ հոգևորականների մի մասը երկար տանջանքներից հետո ազատվեց պարսից գերությունից և վերադարձավ հայրենիք:
6) 450 թ. ծավալված հակապարսկական ապստամբության պայմաններում Վասակ Սյունու հրաժարվելը ապստամբությունից հարված էր Հայաստանի անվտանգությանը:
7) Պարսից տերության կողմից Արևմտյան Հայաստանում աշխարհագիր անցկացնելուց հետո հայ ժողովրդի բոլոր խավերի վիճակը ծանրացավ:

43 **Թվարկվածներից որո՞նք են արևմտահայերի առաջին համագումարի արդյունքներ:**

1) Արևմտահայ ազգային խորհրդի անդամներ են դարձել Սեպուհը, Զապել Եսայանը, Լևոն Շանթը և ուրիշներ:
2) Արևմտահայ ազգային խորհրդի պատվավոր նախագահ է ընտրվել Վահան Փափազյանը:
3) Վանի, Խնուսի և Էրզրումի մարզերում ստեղծվել են Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպություններ:
4) Ընտրվել է կենտրոնական ղեկավար մարմին՝ 15-հոգանոց Արևմտահայ ազգային խուրհուրդ:
5) Բիթլիսի և Խարբերդի մարզերում ստեղծվել են Արևմտահայ ազգային խորհրդի տեղական կազմակերպություններ:
6) Արևմտահայ ազգային խորհրդի նախագահ է ընտրվել Ավետիս Ահարոնյանը:
7) Նորաստեղծ Ազգային ժողովից ընտրվել է 15-հոգանոց գործադիր մարմին՝ Հայոց ազգային խորհուրդը:

44 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Հայաստանը վերջնականապես գրավելու նպատակով ձեռնարկված արշավանքի ընթացքում թյուրք-սելջուկները Սմբատաբերդ լեռան մոտ իրականացրել են բնակչության կոտորած:
2) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոս է դառնում Հովհան Բագարանցին:
3) Ալփ Արսլանը, ուխտադրժորեն գրավելով Արծնը, հիմնահատակ ավերեց այն:
4) Թյուրք-սելջուկներն առաջին անգամ Հայաստան ներխուժել են Վասպուրականի վրայով:
5) Թյուրք-սելջուկները Հայաստանում առաջին անգամ հայտնվել էին VIII դարում որպես վարձկան զինվորականներ:
6) Մանազկերտի 1071 թ. ճակատամարտից առաջ Սյունիքի, Կարսի և Տաշիր-Զորագետի թագավորները ձևականորեն հպատակություն էին հայտնել թյուրք-սելջուկներին:
7) 762թ. արաբների դեմ պայքարը սկզբնապես գլխավորում էին Սմբատ և Գագիկ Արծրունիները, ապա Գուրգեն Արծրունին:

45 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Դավիթ Անհաղթի կարծիքով Արեգակը բազմապատիկ մեծ է Երկրից:
2) Հայոց մեծ թվականի սկիզբ է համարվում 550 թ. հուլիսի 11-ը:
3) Ղևոնդ եպիսկոպոսը նկարագրել է հայ ժողովրդի հերոսական պայքարը արաբական տիրապետության դեմ:
4) VII դարում եկեղեցու հայրերի գրվածքներից հավաքվել է «Կնիք հաւատոյ» ժողովածուն:
5) Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
6) Գյուտ կաթողիկոսը գտնում էր, որ նյութական աշխարհի հիմքում ընկած են չորս տարրերը:
7) Բյուզանդական կայսրը փորձում էր «Հենոտիկոն»-ով հաշտեցնել ուղղափառներին ու կաթոլիկներին:

46 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Միջնադարյան Ճապոնիայում մշակված ինքնասպանության ազգային ձևը հայտնի է «սեպպուկան» անունով:
2) Միջնադարյան Ճապոնիայում մեծ տարածում գտած արյան վրեժի երևույթը հայտնի է «սինոտիզմ» անունով:
3) Մաքսից ազատված նավահանգստային քաղաքները միջնադարյան Եվրոպայում անվանում էին պորտոֆրանկո:
4) Ուղղափառ եկեղեցու կողմից ուշ միջնադարում տրվող մեղքերի թողության թղթերը կոչվում էին ինդուլգենցիաներ:
5) Միջնադարյան Ճապոնիայում կիրառվող հողի չափման միավոր էր ծառայում տանը:
6) Քաղաքական մեծ ազդեցության հասած գործիչներին Նոր ժամանակներում անվանում էին բուրժուազիա:
7) Արևելյան սլավոնների մոտ ավագների խորհուրդը կրում էր «վեչե» անվանումը:

47 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Մշակութային մոդեռնիստական ուղղություններից է ավանգարդիզմը, որի անվանումն առաջացել է ֆրանսերեն ավանգարդ (առաջապահ ջոկատ) բառից:
2) Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում առաջացած միջազգային նոր կազմավորումը հայտնի է «Ինքնիշխան պետությունների միություն» անունով:
3) Չճանաչված են կոչվում այն երկրները, որոնք թեև ճանաչվել են ՄԱԿ-ի կողմից, սակայն նրա Անվտանգության խորհրդի անդամ չեն:
4) 1954 թ. սկսած Ալբանիայի առաջնորդ Ի. Բրոզ Տիտոն մշակեց «սոցիալիզմի կառուցման առանձնահատուկ ուղու» գաղափարը, որը հետագայում ստացավ «էտատիզմ» անվանումը:
5) Ֆրանսիայի պատմության 1946-1958 թթ. շրջանը հայտնի է «Չորրորդ հանրապետություն» անունով:
6) Ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պլանը հայտնի է «Իմ պայքարը» անունով:
7) Հոլանդիայի Մաաստրիխտ քաղաքում 1992 թ. ստորագրված պայմանագրով կազմավորված պետությունների միավորումը կոչվում է Եվրոպական միություն:

48 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Տնտեսական մեծ ճգնաժամին բնորոշ էին տնտեսության հավասարակշռության խաթարումը, արդյունաբերական ապրանքների ծավալների աճը, բնակչության ցածր զնողունակությունը:
2) Արդյունաբերական հեղաշրջմանը բնորոշ է արտադրության մեքենայացման գործընթացը, որը սկսվել է XVII դարի 60-ական թվականներին:
3) Ճապոնիայի արդիականացմանը բնորոշ են տնտեսության մեջ ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրումը, արևմտյան կրթական համակարգի ներդրումը:
4) Ազատական վարչակարգին բնորոշ հատկանիշներից են՝ իշխանության տարանջատումը երեք ճյուղերի, հանդուրժողականությունը կրոնի և հավատքի նկատմամբ, շուկայական տնտեսությունը:
5) Ավտարկիային բնորոշ են առաջնորդի բացարձակ իշխանությունը, ռասայական տեսությունը և ուժի պաշտամունքը:
6) Ռուզվելտի ‹‹Նոր կուրսին›› բնորոշ են մասնավոր առևտրի թույլատրումը, մասնավոր փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը, օտարերկրյա կապիտալի ներգրավումը տնտեսության մեջ և այլն:
7) Ամբողջատիրական վարչակարգին բնորոշ են ահաբեկման համակարգը, տնտեսության կենտրոնացված կառավարումը, գրաքննության բացակայությունը, մեկ կուսակցության գերիշխող դերը:

49 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Զամուա երկիրը գտնվել է Ուրմիո լճից հարավ և հիշատակվել է Ք.ա. II հազարամյակի կեսերին:
2) Հայկական լեռնաշխարհում գտնվող Շանիդար հնավայրը աշխարհի առաջին վաղերկրագործական և անասնապահական հնավայրն է, որը թվագրվում է Ք.ա. VIII հազարամյակով:
3) Հայկական լեռնաշխարհը Ք.ա. VI հազարամյակի II կեսից մուտք է գործել պղնձիքարիդարյան մի ինքնատիպ մշակութային դարաշրջան:
4) XIX դարի վերջերին և XX դարում եվրոպացի աստղագետներ Վ. Օյկոտի, Կ. Ֆլամարիոնի կողմից կատարած եզրահանգումների համաձայն կենդանակերպի անվանակոչումը կատարվել է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. XXVIII դարում:
5) Հայասայի և Խեթական թագավորության միջև կնքված բարեկամության և փոխօգնության պայմանագիրը խախտվել է Ք.ա. XIV դարի առաջին կեսին:
6) Հայկական լեռնաշխարհում քաղաքակրթության ժամանակաշրջանը սկսվել է Ք.ա. IV հազարամյակի կեսերից:
7) Հայերենը հնդեվրոպական ընդհանրությունից անջատվել է Ք.ա. III հազարամյակի վերջին:

50 **Նշված փաստարկներից որո՞նք են վերաբերում Գերմանիայում նացիստական վարչակարգի շրջանին:**

1) Գերմանիայի օրհներգը երգելու իրավունք ունեին միայն Ռայխստագի պատգամավորները:
2) Արգելվում էին սպորտային այնպիսի հաղորդագրությունները, որոնցում նշվում էին գերմանացի մարզիկների պարտությունները:
3) Յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր տանն ունենալ ֆյուրերի լուսանկարը:
4) Նացիստական կուսակցության անդամները պարտավոր էին մանրազնին քննարկել Հիտլերի որոշումները և հայտնել իրենց տեսակետները:
5) 10-18 տարեկան բոլոր երեխաներն ու պատանիները ներգրավվում էին երիտասարդական շարժման՝ Հիտլերյուգենդի մեջ:
6) Արիացիների միջև ամուսնությունները խստորեն արգելվում էին:
7) Սգո հայտարարություններում արգելվում էր նշել այն մասին, որ անձը մահացել է վիրաբուժական գործողության ընթացքում:

51 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Չորրորդ հանրապետության ընթացքում բարելավվեցին Ֆրանսիայի հարաբերությունները ԽՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ:
2) ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կազմված է 5 մշտական և 10 ժամանակավոր անդամներից:
3) Բեռլինի պատի փլուզումից երեք տարի անց Գերմանիան վերամիավորվեց:
4) Թեհրանի խորհրդաժողովում ամենագլխավորը երկրորդ ճակատի բացման հարցն էր:
5) Երկրորդ աշխարհամարտի ընթացքում բեկումն սկսվել է Մոսկվայի ճակատամարտով:
6) Պոտսդամի խորհրդաժողովում Ստալինը հավաստիացրել է դաշնակիցներին, որ ԽՍՀՄ-ը պատերազմ կհայտարարի Ճապոնիային:
7) Սառը պատերազմի սկիզբ է համարվում Հ. Թրումենի ունեցած ելույթը Բրյուսելում:

52 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Ֆրանսիացի գրող և փիլիսոփա Ժան Պոլ Սարտրը հրաժարվել է 1964 թ. իրեն շնորհված Նոբելյան մրցանակից:
2) Պաբլո Պիկասոն և Ժորժ Բրակը հիմնադրել են ավանգարդիստական ուղղության ֆուտուրիզմ կոչվող հոսանքը:
3) Վերացական նկարչությունը գույների և ձևերի համադրություն է՝ բոլորովին զրկված առարկայությունից:
4) Ֆ. Բեկոնը իր գոյությունը ապացուցում էր այսպես « Ես մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ»:
5) Ըստ Դենի Դիդրոյի՝ բնության մեջ և տիեզերքում հաստատված կարգը գործում է բացառապես նրանում առկա բացարձակ օրենքներով:
6) Ֆրանց Կաֆկան և Մարսել Պրուստը մոդեռնիզմի ուղղության գրողներ էին:
7) Կուբիզմի խոշոր ներկայացուցիչ է Վազարելին:

53 **Հետևյալ պատճառահետևանքային կապերից որո՞նք են ճիշտ:**

1) 1832 թ. Կոստանդնուպոսլի մատույցներում հայտնված եգիպտական զորքերի հետագա առաջխաղացումը կասեցվեց Անգլիայի կողմից Թուրքիային ցուցաբերած ռազմական օգնության շնորհիվ:
2) Իրանին ռուսական կողմնորոշումից հեռու պահելու նպատակով XIX դարի վերջին և XX դարի սկզբին եվրոպական երկրները նպաստում էին նրա տնտեսական զարգացմանը:
3) 1918 թ. կնքված անգլո-ֆրանսիական նոր համաձայնագրով, որը հիմնականում վերահաստատում էր Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, արաբական երկրների մեծ մասը բաժանվեց Անգլիայի և Ֆրանսիայի միջև:
4) Զանգվածային ընդվզումների ճնշման տակ 1906թ. Իրանի շահը հրապարակեց հրովարտակ սահմանադրություն ընդունելու և խորհրդարան հրավիրելու մասին:
5) XX դարի սկզբին Իրանում ծավալված սահմանադրական շարժմանը մասնակցում էին նաև Հայ հեղափոխական դաշնակցության անդամներ:
6) 1911 թ. գրավելով Իրանի մի զգալի մասը՝ Անգլիան առաջադեմ ուժերին ստիպեց հեռանալ իշխանությունից և այն հանձնել շահի կողմնակիցներին:
7) 1841 թ. ստորագրած առևտրական պայմանագրով Ֆրանսիան իր հսկողությունը հաստատեց Իրանի տնտեսության նկատմամբ:

54 **Հետևյալ փաստարկներից որո՞նք են Վերսալյան պայմանագրի հետևանքներ:**

1) Էլզասն ու Լոթարինգիան անցել են Բելգիային ու Դանիային:
2) Հռենոսի գոտին 10 տարով հանձնվել է Ֆրանսիային:
3) Գերմանիայի ստորջրյա նավատորմը ու ռազմական օդուժը սահմանափակվել է 100 հազարով:
4) Գերմանիան զրկվել է իր բոլոր գաղութներից:
5) Գերմանիային արգելվել է բանակ ունենալ:
6) Սաարի ածխավազանի շրջանը 15 տարով դրվել է միջազգային վերահսկողության տակ:
7) Դանցիգը ստացել է ազատ քաղաքի կարգավիճակ:

55 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) ԱՄՆ-ում 1960-ական թթ. սկսված կոմունիստական արշավը ստացել է «մաքքարտիզմ» անվանումը:
2) Տնտեսության որոշ ճյուղերի, հողի և այլ մասնավոր սեփականության վերածումը պետական սեփականության կոչվում է ազգայնացում:
3) Համաշխարհային պատմության արդի փուլին բնորոշ հասարակությունը կոչվում է արդյունաբերական կամ տեխնոլոգիական հասարակություն:
4) Ամբողջատիրությունը բռնապետական իշխանության ձև է, որը հայտնի է «տոտալիտարիզմ» անունով:
5) Պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում կոչվում է ինքնիշխանություն:
6) Երկրորդ աշխարհամարտի Արևելյան ճակատի 1939 թ. սեպտեմբերից մինչև 1940 թ. մայիս պատերազմաշրջանն ստացել է «տարօրինակ պատերազմ» անունը, որովհետև այդտեղ ակտիվ ռազմական գործողություններ չեն մղվել:
7) Ռուսաստանում ցարի տապալումից հետո ստեղծված գործադիր իշխանության մարմինը կոչվում էր ժողկոմխորհ:
8) Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված աշխարհակարգը հայտնի է «Վերսալ-վաշինգտոնյան» անունով:
9) Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարումը հաղթող երկրին կոչվում է կոնֆիսկացիա:

56 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1) Եվրոպայի օգնությամբ Հայաստանից պարսիկներին վտարելու Իսրայել Օրու կազմած ծրագիրը կոչվել է Հյուսիսային ծրագիր:
2) Ռուսաստանի հետադիմական վարչակարգի հակահայ քաղաքականության դեմ պայքարելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր Պաշտպանության կոմիտե:
3) 1915 թ. Քանաքեռում Դրոյի, Համազասպի, Վարդանի և Քեռու կամավորական խմբերի միավորմամբ ստեղծված զորամիավորումը կոչվել է Երևանյան գունդ:
4) Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի կազմած Հայաստանի ազատագրման և հայ-ռուսական դաշնագրի նախագիծը՝ բաղկացած 18 հոդվածից, կոչվել է Մոսկովյան ծրագիր:
5) Ցեղասպանությունը որևէ ազգի, ռասայի, էթնիկական կամ կրոնական խմբի ամբողջական կամ մասնակի բնաջնջմանը նպատակաուղղված ծրագիր և գործողություն է:
6) 1897 թ. հուլիսին քրդական մազրիկ ցեղի վրա 250 հայդուկների հարձակման և կոտորման վրեժխնդրական գործողությունը հայտնի է Խանասորի արշավանք անունով:
7) Հայոց ազգային համախորհրդակցության արդյունքում ձևավորվել է Ազգային ժողով, որի գործադիր մարմինը կոչվել է պատգամավորական Հայոց ազգային բյուրո:
8) 1918 թ. մարտին Հայկական կորպուսի և Հատուկ հավաքական ջոկատի միավորմամբ ստեղծված զինվորական միավորը կոչվել է Առանձին հայկական կորպուս:
9) 1916 թ. անգլո-ֆրանսիական գաղտնի բանակցությունների արդյունքում Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ ստորագրված համաձայնագիրը հայտնի է «Սայքս- Պիկոյի համաձայնագիր» անվամբ:

57 **Հետևյալ պատճառահետևանքային կապերից որո՞նք են ճիշտ:**

1) Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխումների համաձայն՝ զինվորները սպառազինության ծախսերը և ապրուստի միջոցները ստանալու էին ազնվականության վճարած հարկերից:
2) Կաթոլիկ եկեղեցու հետ հարաբերությունները կարգավորելու համար Ֆրանսիայի թագավոր Հենրիխ IV-ը հրապարակեց Նանտի էդիկտը:
3) Արաբների դեմ մղած հաղթական պատերազմի շնորհիվ Կարլոս Մեծին հաջողվեց գրավել Հարավ արևմտյան Իսպանիան:
4) Ֆ. Ֆուկայամայի աշխատության մեջ արծարծվում է այն գաղափարը, որ ապագայում առանձին փոքր պատերազմներ հնարավոր են, իսկ մեծ պատերազմների հավանականությունը խիստ նվազել է:
5) Թերմոպիլյան կիրճում պարսկական մեծաքանակ զորքերի դեմ 300 սպարտացիների մղած հերոսական կռվի շնորհիվ Ատտիկայի բնակչությունը հասցրեց հեռանալ կղզիներ:
6) Պելոպոնեսյան պատերազմների հետևանքով վերականգնվեց Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանությունը Փոքր Ասիայում:
7) Կարլոս Մարտելի ռազմական բարեփոխման համաձայն զինվորներին տրամադրվելու էր հող և այնտեղ աշխատելու համար գյուղացիներ գնելու իրավունք:
8) Հռոմում երկու պրետորների ինստիտուտ սահմանելը պայմանավորված էր մեկ մարդու ձեռքին մեծ իշխանության կենտրոնացում թույլ չտալու նպատակով:
9) Պելոպոնեսյան պատերազմները հանգեցրին Հռոմի ազդեցության մեծացմանը Էգեյան ծովում:

58 **Հայկական հարցի միջազգայնացմանը վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1) Բեռլինի վեհաժողովի նախօրյակին կնքվում է ֆրանս-թուրքական գաղտնի համաձայնագիր, որով Ֆրանսիան թուրքերից ստանում է Կիպրոս կղզին:
2) Արևմտահայ գործիչները՝ հոգևորականներ, արևմտահայերի Ազգային ժողովի երեսփոխաններ, Հայկական հարցի լուծման ակնկալությամբ հանդիպումներ ունեցան ռուսական պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Նելիդովի հետ:
3) Մայիսի 18-ին Լոնդոնում կնքվում է ռուս-թուրքական համաձայնագիր, որը նախատեսում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի մի շարք կետերի վերանայում:
4) Սան Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին էին անցնում Կարսի, Կաղզվանի, Ալաշկերտի, Բայազետի և Էրզրումի գավառները:
5) Հայկական հարցը, կազմելով Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, XIX դ. երկրորդ կեսին վերաբերում էր արևմտահայության ազատագրության կամ ինքնավարության խնդրին:
6) Սան Ստեֆանոյի պայմանագրում Հայաստան բառի առկայությամբ սուլթանական կառավարությունն առաջին անգամ դիվանագիտական մակարդակով ստիպված էր ընդունել, որ կայսրության կազմում գոյություն ունի հայերի հայրենիք Հայաստանը:
7) Մկրտիչ Խրիմյանը ռուսական պատվիրակությունից պահանջում էր Սան Ստեֆանոյի պայմանագրում կետ մտցնել Ռուսաստանի հովանավորության տակ Արևմտյան Հայաստնում ինքնավարություն ստեղծելու վերաբերյալ:
8) Բեռլինի պայմանագրի արդյունքում Կարս բերդաքաղաքը դարձավ նորաստեղծ Կարսի մարզի կենտրոնը՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի, Օլթիի գավառներով:
9) Բեռլինի պայմանագրով Օսմանյան կայսրությանն են վերադարձվել Ալաշկերտի և Բայազետի գավառները:

59 **Հետևյալ պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1) 1736 թ. Էրզրումի պայմանագրով Թուրքիան ճանաչել է Պարսկաստանի տիրապետությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
2) Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը ձեռք է բերել պետական ինքնավարություն:
3) Բաթումի պայմանագրով Օսմանյան կառավարությունն ընդունել և ճանաչել է Հայաստանի անկախությունը:
4) Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք է բերել Ղրիմի թերակղզի:
5) 1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Ռուսաստանը տիրացել է մերձկասպյան տարածքներին:
6) Բրեստ-Լիտովսկի պայմանագրի արդյունքում Կարսում և Բաթումում տեղակայվելու էր ռուսական զորք:
7) Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ձեռք է բերել Սև ծովի շրջանները՝ ներառյալ Փոթին:
8) Բրեստ-Լիտովսկի պայմանագրի արդյունքում Օսմանյան Թուրքիային են անցել Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:
9) 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի արդյունքում Թուրքիան գործողությունների ազատություն է ստացել Շամախիից արևելք ընկած տարածքներում:

60 **Պատմական իրադարձությունների և երևույթների թվարկված պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են սխալ:**

1) Առավելապես Մեծ Բրիտանիայի պատճառով Պոտսդամի խորհրդաժողովում Թուրքիայի հանդեպ ԽՍՀՄ տարածքային պահանջների հարցը չլուծվեց:
2) Աֆրիկայի, Ասիայի և Կենտրոնական Ամերիկայի թույլ զարգացած երկրներից ներգաղթյալների պատճառով սոցիալական լարվածության նոր աղբյուր է առաջացել զարգացած երկրներում, որը գնալով ստանում է ավելի վտանգավոր բնույթ:
3) Չմիացած երկրների շարժման հետևանքով ձևավորվեց երկբևեռ աշխարհ:
4) Առաջին աշխարհամարտի հետևանքով փլուզվել են չորս կայսրություններ՝ Ռուսաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան:
5) Առաջին աշխարհամարտի հասարակական-քաղաքական գլխավոր հետևանքը Խորհրդային Ռուսաստան պետության ստեղծումն էր:
6) Երկրորդ աշխարհամարտի գլխավոր պատճառներից մեկը տերությունների միջև եղած տնտեսական հակամարտությունն էր:
7) Երկրորդ աշխարհամարտի նախօրեին հավաքական անվտանգության համակարգ ստեղծելու ԽՍՀՄ ջանքերը հաջողեցին, որովհետև Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան ամեն կերպ փորձում էին զսպել ֆաշիստական խմբավորման ծավալապաշտությունը:
8) Ստալինգրադի ճակատամարտի գլխավոր հետևանքը արմատական բեկման սկիզբն էր աշխարհամարտի ընթացքում հօգուտ ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների:
9) Կուրսկի ճակատամարտում Կարմիր բանակի հաղթանակի հետևանքով հօդս ցնդեց ֆաշիստների կայծակնային պատերազմի պլանը:

61 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Վանի թագավորության զորքերի հաղթարշավը Աղստևի հովիտ
2) Հայաստանում պետական գրագրության մեջ օտար այբուբենների կիրառման սկիզբը
3) Միասնական դիցարանի ստեղծումը Վանի թագավորությունում
4) Արցախի առաջին հիշատակությունը սեպագրերում
5) Արծկե քաղաքի հիմնադրումը
6) Արմավիրի վերածվելը համահայկական երկրորդ թագավորության մայրաքաղաքի

62 **774-775 թթ. հակաարաբական ապստամբության իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Մուշեղ Մամիկոնյանի հաղթանակը Բագավանում
2) Տարոն ներխուժած արաբական զորաջոկատի ջախջախումը Մուշեղ Մամիկոնյանի կողմից
3) Արճեշի ճակատամարտը
4) Մուշեղ Մամիկոնյանի ամրանալը Արտագերս ամրոցում
5) Արտավազդ Մամիկոնյանի հարձակումը արաբ գլխավոր հարկահանի վրա
6) Արձնիի ճակատամարտը

63 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Արևմտահայ ազգային խորհրդի ստեղծումը
2) Արամ Մանուկյանի նշանակվելը Վանի նահանգապետ
3) Հայոց ազգային խորհրդի ստեղծումը
4) Շատախի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության ավարտը
5) Ջեմալի մահապատժի իրականացումը
6) Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը

64 **Արցախյան շարժման իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Սումգայիթի հայ բնակչության կոտորածը
2) Հայ բնակչության կոտորածները Բաքվում
3) Պարետային ժամի հայտարարումը Երևանում
4) Հենրիխ Պողոսյանի ելույթը ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության նիստին
5) Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու պահանջագրի ներկայացումը Մոսկվա
6) Հենրիխ Պողոսյանի՝ ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար ընտրվելը

65 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Հիքսոսների վտարումը Եգիպտոսից
2) Առաջին պետությունների ստեղծումը մայրցամաքային Հունաստանում
3) Նորբաբելոնյան գերիշխանության հաստատումը Առաջավոր Ասիայում
4) Խեթա-եգիպտական հաշտության և փոխօգնության պայմանագրի կնքումը
5) Կասիտական հարստության իշխանության ավարտը Բաբելոնիայում
6) Հուդայի թագավորության մայրաքաղաքի գրավումը բաբելոնյան զորքերի կողմից

66 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Ադրիանուպոլիս քաղաքի գրավումը Մուրադ I-ի կողմից
2) Նիկեա քաղաքի գրավումը թուրք-օսմանների կողմից
3) Կոստանդնուպոլսի գրավումը օսմանյան թուրքերի կողմից
4) Բրուսա քաղաքի գրավումը Օսման բեյի բանակների կողմից
5) Բաղդադի գրավումը թյուրք-սելջուկների կողմից
6) Թավրիզի գրավումը Իսմայիլի գլխավորությամբ ղզլբաշների կողմից

67 **XIX դարի առաջին կեսի ռուս-պարսկական պատերազմների իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Օշականի ճակատամարտը ռուս-պարսկական զորքերի միջև
2) Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը
3) Աբասաբադ բերդի գրավումը ռուսական զորքի կողմից
4) Սարդարապատի գրավումը ռուսական զորքի կողմից
5) Գեներալ Գուդովիչի Երևանյան արշավանքը
6) Գանձակի գրավումը հայազգի գեներալ Մադաթովի կողմից
7) Արթիկի գրավումը ռուսական զորքի կողմից
8) Ռուսական զորքերի հաղթանակը Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ

68 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Գ. Նժդեհի ժամանումը Զանգեզուր՝ ինքնապաշտպանությունն ամրապնդելու նպատակով
2) «Աշոտ Երկաթ» ռազմանավի գործարկումը Սևանա լճի վրա
3) Զանգեզուրից Դրոյի և Նժդեհի ջոկատների մուտքը Արցախ
4) Արցախահայության առաջին համագումարի հրավիրումը
5) Հայոց կենտրոնական ազգային խորհրդի ժամանումը Թիֆլիսից Երևան
6) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագիր» ակտ–ի ստորագրումը
7) Հայաստանի և Վրաստանի միջև կարճատև պատերազմի ավարտը
8) Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհրդի ստեղծումը

69 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Կարիբյան ճգնաժամի խաղաղ լուծումը
2) Գերմանիայի Դաշնային Հանրապետության ստեղծումը
3) Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Կուբայում
4) Վարշավյան դաշինքի ստեղծումը
5) Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը
6) Մարշալի պլանի գործարկման սկիզբը
7) Աշխարհում առաջին ջերմամիջուկային ռումբի փորձարկումը
8) Կորեական պատերազմի սկիզբը

70 **Պատմական իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Եռապետների հաղթանակը Կասիոսի և Բրուտոսի դեմ Հունաստանում
2) Օգոստոս Օկտավիանոսի հռչակումը ցմահ տրիբուն
3) Մակեդոնիայի նվաճումը Հռոմի կողմից
4) Հռոմի վերագրավումը Սուլլայի կողմից և դիկտատուրայի հաստատումը
5) Տոմարի բարեփոխումը Հռոմում, լուսնային օրացույցի փոխարինումը արևային օրացույցով
6) Հռոմի քաղաքացիներին հավասար իրավունքներ ունենալու համար իտալիկների ապստամբությունը
7) Հուլիոս Կեսարի հռչակումը ցմահ դիկտատոր
8) Առաջին եռապետության ստեղծումը Հռոմում